Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11003/25-Ե32 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 3

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 2. Երևան - 2 ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.07.-30.09.2025թթ. |
| Ներկայացման օր | 01.10.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունների համակարգող |

2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և Դեպիների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում.
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ-հոգեբանական օգնության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 47 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 5 ուղղորդում. միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- **Ազատ ժամանցի կազմակերպման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ մանր և խոշոր մոտորիկայի. ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող վարժությունների, կապերի ընդլայնման, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 10 խմբակ. որոնց մասնակցել են 47 շահառու:
    - Հայ եկեղեցու պատմություն. կերպարվեստ,
    - Կինեզոլոգիա,
    - Երգ,
    - Խոհարարական,
    - Առողջապահական,
    - Ձեռքի աշխատանք,
    - Գրական,
    - Յոգա
    - Մարմնամարզություն-պար
    - Կար

  Կենտրոններում կազմակերպվել է թվով 17 միջոցառում: Շահառուները մասնակցել են տարբեր համերգասրահներում կազմակերպված 11 համերգի, 1 ներկայացման և 1 մուլտիմեդիա անիմացիոն ցուցադրության:
  Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպված միջոցառումներին մասնակցել են 45 շահառու:
  Իրականացված միջոցառումներն են.

- Հանդիպում քահանայի հետ,
- Միջոցառում-մրցույթ. Ճենգավիթ վարչական շրջանի տարեցների սեղանի խաղերի հանրապետական մրցաշարի համայնքային փուլ,
- Ծննդյան օրվա նշում - 100 ամյակ.
- Ինտեգրման միջոցառում բակային եռօրյա ճամբարի ձևաչափով. Աջափնյակի և Ճենգավիթի արցախցի եվ տեղացի շահառուների մասնակցությամբ,
- Սբ.Աստվածածնի վերափոխման տոն

**Էքսկուրսիաներ**

- Դեպի Ռչնի Սբ.Աստվածածին, Աղվերան.Նեղոցի վանք, հանգստի գոտի,
- Դեպի Սեվան. Հայրավանք,Նորատուսի խաչքարեր,
- Դեպի Դիլիջան, Իջեվան. Մակարավանք,
- Դեպի Օձուն, Սանահին, Հաղպատ,
- Դեպի Դիլիջան.
- Դեպի Գառնի, Գեղարդ,
- Դեպի Տաթեվ,
- Դեպի Հրաշք այգի.
- Դեպի Սեվան,
- Դեպի Սիրահարների այգի:

**Մասնակցություն համերգներին և ներկայացումներին.**

- Արամ Խաչատրյան համերգասրահ.
  ՀԲԸՄ-Ն բացահայտում է տաղանդներ. դիրիժորներ. Ներսես Մկրտչյան. Յարոսլավ Ռիչկով,
  Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ. գեղարվեստական ղեկավար Սերգեյ Սմբատյան, սիմֆոնիկ ճամփորդություն,
  Արս Նովա Նապոլի.Նեոպոլը գալիս է Երեվան.Նեապոլիտական ժողովրդական երգեր-2,
  Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ. գեղարվեստական ղեկավար Սերգեյ Սմբատյան. «Արմենիա» միջազգային երաժշտական փառատոն՝ բացման համերգ. Դարիուս Պրոյս. ջութակ,
  Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ. գեղարվեստական ղեկավար Սերգեյ Սմբատյան, «Արմենիա» միջազգային երաժշտական փառատոն. Օլգա Շեպս՝ դաշնամուր,
  Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, «Արմենիա» միջազգային երաժշտական փառատոն. Էլիֆանտ Կոմիս դաշնակահար/դիրիժոր Իտալիա:
- Կոմիտասի անվան կամերային երաժշտության տուն,
  Վասիլի Կանդինսկու անվան քառյակի համերգ,
  Համերգ նվիրված Ավ.Իսահակյանի 150–ամյակին,
- Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի եվ բալետի ազգային ակադեմիական թատրոն. Հայաստանի «Բարեկամություն» պետակական անսամբլի համերգը-2,
- Հրաչյա Ղափլանյանի անվան Դրամատիկական թատրոն. «Կանգստեր Մաքը» ներկայացում:
- Մուլտիմեդիա ցուցադրություն Վան Գոգի եվ Գուստավ Կլիմտի կտավներով, ճամփորդություն արվեստում խորագրով: Անիմացիոն ցուցադրությունը տեղի է ունեցել Հայաստանի նկարիչների միության «Արա Սարգսյան» ցուցասրահում-2:

- **Աշխատանքային/արտթերապիայի կազմակերպման** շրջանակներում Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է թվով 30 հանդիպում (մասնակիցների թիվ՝ 47) ուղղված նյարդային լարված վիճակի թուլացմանը, դրական հույզերի ու մտքերի վրա կենտրոնացմանը, հույզերի բացահայտմանը գույների միջոցով, շարժումների կոորդինացիային, տեսատարածական ընկալմանը, մանր շարժողականությանն ու ուշադրության կենտրոնացմանը:

Արտթերապիա, վիզուալիզացիա, նեյրոբիկ վարժություններ, պարաթերապիա, հիշողությունը եվ ուշադրությունը ակտիվացնող խաղ-վարժանքներ: Աշխատանք մտքի հետ՝ լավատեսության վերաբերյալ զրույցներ, շնչառական վարժություններ, հույզերի հետ աշխատանք, ինտելեկտուալ խաղեր:

- **Սննդի կազմակերպման** շրջանակներում կենտրոններում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- **Բաղնիքի ծառայության տրամադրման** շրջանակներում թվով շահառու օգտվել է բաղնիքի ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Դեպի դեպի Ռջնի (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/v/1FdspBDr4t ),
- Միջնցառում - մրցույթ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100064615335914/videos/2204285166677759 ),
- Ծննդյան օրվա նշում - 100 ամյակ, (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/watch/?v=1867286067181255&rdid=eGsTPoTtYsktEvQ5 ),
- Սբ.Աստվածածնի վերափոխման տոն, (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid09NkkgTpB4WZLHbVye1gNG9eLo894gu4A8MSED4SSgjCjoPgKvTdrWmW1k2hnUftAl&id=100081543423963),
- Ռակային ճամբար (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/reel/1147658057263753 ),
- Էքսկուրսիա Սևան (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/v/1C1qz5W4C8/ ),
- Կինեզոլոգիա (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/watch/?v=2521832903775411&rdid=qhYkkKH882Uebv2g ),
- Երգ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/reel/1929644760940824 )
- Խոհարարական (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/watch/?v=1723049568343886&rdid=11JeZbCUBJJeW6tw ),
- Գրական (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/watch/?v=2421941754438547&rdid=CDm5sgIsNiNudz1V ),
- Հոգեբան (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/watch/?v=2542642715027966&rdid=pUGfM8BSRD9Q0eMV ),

.3. **Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը**:

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

2.4. **Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և Դեպիների կազմակերպում,

- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում.
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Աջափնյակ ցերեկային կենտրոնի բուժքույրը մասնակցել է Աշխատանքի եվ սոցիալական հարցերի նախարարության կողմից կազմակերպած «Թվային տեխնոլոգիաներ» վերապատրաստման դասընթացին:

Ձևաչափ

# ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 42 / 47 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 42 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 4 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 3 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 1 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 3 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 44 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 47 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 47 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 47 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 47 |
| 5.1 | Հայ եկեղեցու պատմություն. կերպարվեստ | 25 |
| 5.2 | Կինեզոլոգիա | 32 |
| 5.3 | Պարաթերապիա | 17 |
| 5.3 | Ձեռքի աշխատանք | 10 |
| 5.4 | Երգ | 20 |
| 5.5 | Խոհարարական | 12 |
| 5.6 | Առողջապահական | 37 |
| 5.7 | Գրական | 18 |
| 5.8 | Յոգա | 13 |
| 5.9 | Մարմնամարզություն/պար | 29 |
| 5.10 | Կար | 3 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 45 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 37 |
| 7. | Այլ ծառայություն (նշել)՝ Բաղնիքի ծառայություն<br>Բուժքույրական ծառայություն | 1<br>48 |

Կազմակերպության ղեկավար Երվանդ Մխիթարյան «07»10.2025թ